**Հավելված N 1**
**«ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-17/26»* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
## Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-17/26» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 3 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ -ի՝

- ☐ հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00862214
- ☐ բանկային հաշվեհամարն է՝ 2050022205441001
- ☐ գործունեության հասցեն է՝ ՀՀ ք.Երևան, Գարեգին Նժդեհ 34
- ☐ Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ tender@autofan.am
- ☐ Հեռախոսահամարն է՝ 043491516
- ☐ ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО Автофан Эй Си

Սույնով ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-17/26»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում [1]

ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ն

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- ☐ թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- ☐ բացակայում է հրավերով սահմանված՝ ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

---

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

☐ ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

ԱՎՏՈՖԱՆ ԷՑ ՍԻ ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

ԱՎՏՈՖԱՆ ԷՑ ՍԻ ՍՊԸ-ի տնօրեն Ա. Շահինյան

Digitally signed by SHAHINYAN ARMAN 2103810651
Date: 2026.02.20 11:59:25 AMT

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը: